IDBank

# 2021

ՏԱՐԵԿԱՆ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

# Բովանդակություն


**01 Բանկի մասին համառոտ**

IDBank-ը մեկ հայացքով 04

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 06

Բանկի ձեռքբերումները 07

Բանկը որպես հաշվետու թողարկող 08

**02 Ռազմավարական հաշվետվություն**

Խորհրդի նախագահի ուղերձ 10

Վարչության նախագահի ուղերձ 11

ՀՀ տնտեսությունը 12

Մեր ռազմավարական արդյունքները 15

Ֆինանսական արդյունքներ 19

Մեր անձնակազմը 22

**03 Կորպորատիվ կառավարում**

Մեր բաժնետերերը և խորհուրդը 27

Ռիսկերի կառավարում 29

**04 Ֆինանսական հաշվետվություններ** 32

**05 Պատասխանատու անձանց հայտարարություն** 35

1

# Բանկի մասին համառոտ


IDBank-ը մեկ հայացքով 04

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 06

Բանկի ձեռքբերումները 07

Բանկը որպես հաշվետու թողարկող 08

# IDBank-ը մեկ հայացքով




“

IDBank-ը Հայաստանի նորարար զարգացող բանկերից մեկն է և արդեն 32-ամյա գործունեության փորձ ունի բանկային համակարգում: Բանկը մշտապես ընդլայնում և բարելավում է հաճախորդներին մատուցվող ծառայությունները, թվային հարթակում մատուցվող ծառությունների շրջանակը՝ հաճախորդներին առաջարկելով հետաքրքիր լուծումներ և առավելագույն հարմարավետություն: Հավատարիմ մնալով իր առաքելությանը և ռազմավարական առաջնահերթություններին՝ Բանկը հստակ քայլերով առաջ է շարժվում՝ կերտելով իր հաջողության ուղին:

# IDBank-ը մեկ հայացքով

2021 թվականի արդյունքներով

- Վարկային պորտֆելի 24% աճ
- Վարկային պորտֆելի աճի տեմպով շուկայի առաջատար

- Ավանդների, հաշիվների 38% աճ
- Կապիտալի համարժեքության բարձր մակարդակ

| | | |
|---|---|---|
| *Ակտիվներ* 197 մլրդ. | *Պարտավորություններ* 151 մլրդ. | *Կապիտալ* 46 մլրդ. |
| *Վարկեր* 117 մլրդ. | *Ավանդներ, հաշիվեր* 92 մլրդ. | *Զուտ շահույթ* 1.5 մլրդ. |
| *ROE* 3.4% | *ROA* 0.8% | *CAR* 23.3% |

| | |
|---|---|
| *Հաճախորդներ* 405 հազ. | *Աշխատակիցներ* 537 |
| *Քարտեր* 260 հազ. | *Թվային հարթակում գրանցված ակտիվ հաճախորդներ* 70% |

| | | |
|---|---|---|
| *Մասնաճյուղեր* 13 | *ATM- ներ* 55 | *POS տերմինալներ* 784 |

- Ակտիվ հաճախորդների 40% աճ
- Թվային հարթակում ակտիվ հաճախորդների մոտ 110% աճ

- Թողարկված քարտերի քանակի մոտ 40% աճ
- Քարտերով վճարումների մոտ 100% աճ

# Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները

**Բանկի առաքելությունը**

Լինել առաջին ընտրության բանկ մեր հաճախորդների համար՝ որպես Հայաստանի լավագույն նորարար բանկ:

**Բանկի տեսլականը**

Դառնալ առաջատար թվային բանկ՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:

**Բանկի արժեքները**

***Մենք նորարար ենք*** – Մեր առաջնային նպատակներից է հաճախորդներին որակյալ, արագ և առանց սահմանների բանկային ծառայությունների մատուցումը՝ բաց և նորարարական թվային հարթակի միջոցով:

***Մենք թափանցիկ ենք*** – Մենք շարունակական ջանքեր ենք գործադրում, որպեսզի առավել թափանցիկ լինենք մեր հաճախորդների, ներդրողների, գործընկերների և բաժնետերերի հետ հարաբերություններում:

***Մենք վստահելի ենք*** – Մենք կարևորում ենք մեր շահառուների տվյալների անվտանգ պահպանությունը՝ մեծ ռեսուրսներ ներդնելով դրանք կիբերհարձակումներից և այլ սպառնալիքներից պաշտպանելու համար:

***Մենք հավատարիմ ենք*** – Մենք մեր հաճախորդների կողքին կլինենք կյանքի և՛ լավ, և՛ վատ պահերին՝ ստեղծելով հաճախորդամետ էկոհամակարգ նրանց պահանջմունքների շուրջ:

***Մենք թիմային ենք*** – Մենք խրախուսում ենք մեր աշխատակիցների նորարարական մոտեցումները և համոզված ենք, որ միայն թիմային ջանքերով է հնարավոր հասնել գերազանց արդյունքների:

# Մեր ձեռքբերումները

- ✓ **B1** - կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշ (CRRs)
- ✓ **B2** - տեղական արժույթով և արտարժույթով ներդրվող ավանդների երկարաժամկետ վարկանիշ

IDBank-ը առաջին հայկական բանկերից մեկն է, որն առաջարկում է **SWIFT global payment innovation (gpi)** ծառայություններ:

IDBank- ը առաջին հայկական բանկն է, որը պաշտոնապես միացել է Առևտրի Միջազգային Պալատին (ԱՄՊ):

Բանկը ստացել է ՋՎԵԲ մրցանակը՝ ՋՎԵԲ առևտրի ֆինանսավորման էքսպերտի ոլորտում

Բանկը միացել է ֆինանսների և առևտրի բանկային միությանը **(BAFT)**՝ միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում:

BSI-ի կողմից Բանկին շնորհվել է Տեղեկատվական անվտանգության կառավարման միջազգային համապատասխանության վկայագիր **ISO/IEC 27001:2013**

Բանկը BSI-ի կողմից ստացել է Որակի կառավարման համակարգի վկայագիր **ISO 9001:2015**

Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվել են AMX- ում և ներառված են պարտատոմսերի հիմնական Abond ցուցակում

IDBank -ը **VISA** քարտերի ամենախոշոր թողարկողն է Հայաստանում

# Բանկը որպես հաշվետու թողարկող

Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:

2021 թվականի առաջին թողարկման պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 5 մլն ԱՄՆ դոլար: Պարտատոմսերը թողարկվել են հունվարին՝ 30 ամիս ժամկետայնությամբ, արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը՝ 5%, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ եռամսյակային:

2021 թվականի 2-րդ թողարկման պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 5 մլն ԱՄՆ դոլար: Պարտատոմսերը թողարկվել են օգոստոսին՝ 27 ամիս ժամկետայնությամբ, արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը՝ 4%, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ եռամսյակային:

2021 թվականի 3-րդ թողարկման պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 5 մլն ԱՄՆ դոլար: Պարտատոմսերը թողարկվել են դեկտեմբերին՝ 27 ամիս ժամկետայնությամբ, արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը՝ 4%, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ եռամսյակային:

Բանկի՝ 2021 թվականի 1-ին և 2-րդ թողարկումների պարտատոմսերը 2021 թվականի ընթացքում ցուցակվել են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում՝ ընդգրկվելով պարտատոմսերի հիմնական (Abond) հարթակում, իսկ 3-րդ թողարկման պարտատոմսերը 2021 թվականի ընթացքում դեռևս գտնվել են առաջնային տեղաբաշխման փուլում: 2021 թվականի վերջի դրությամբ 3-րդ թողարկման պարտատոմսերից առաջնային շուկայում տեղաբաշխվել է մոտ 2 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմս:

**Թողարկված պարտատոմսեր (մլրդ ՀՀ դրամ)**




Արդյունքում՝ 2021 թվականի վերջի դրությամբ երկրորդային շուկայում շրջանառվում են IDBank-ի կողմից իրականացված 6 թողարկումների պարտատոմսերը, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 25 մլն ԱՄՆ դոլար և 250 մլն ՀՀ դրամ:

## Պարտատոմսերում ներդրողների ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել

Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը հիմնականում կրում է հետևյալ ռիսկերը՝

- ✓Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժութային ռիսկ և այլն),
- ✓Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
- ✓Գնաճի ռիսկ

31/12/2021թ դրությամբ շուկայում ներդրողի ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել:

# 2

# Ռազմավարական հաշվետվություն


Խորհրդի նախագահի ուղերձը 10

Վարչության նախագահի ուղերձը 11

ՀՀ տնտեսությունը 12

Մեր ռազմավարական արդյունքները 15

Ֆինանսական արդյունքները 19

Մեր անձնակազմը 22

# Խորհրդի նախագահի ուղերձը



**Վարտան Դիլանյան**

**«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ**

Ծնվել է 1971թ. հուլիսի 24-ին:

1994թ. ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը:

2010թ. ավարտել է «Սկոլկովո» Մոսկվայի կառավարման դպրոցը, Executive MBA:

2008թ. նշանակվել է «ԲԻՆԲԱՆԿ» ԲԲԸ նախագահ:

2011թ.-ից աշխատում է «Ակսենչեր» ընկերությունում որպես կառավարիչ-տնօրեն «Ֆինանսական ծառայություններ» գործառնական խմբում:

Ներկայումս հանդիսանում է «Ակսենչեր» ընկերության գործադիր տնօրեն Ռուսաստանում և Ղազախստանում:

2016թ-ին նշանակվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ:

**Հարգելի՛ հաճախորդներ և գործընկերներ,**

2021 թվականին մենք շարունակել ենք Բանկի առջև դրված նպատակների իրագործումն ու հաջողել ենք բոլոր հիմնական ուղղություններում:

Չնայած այն հանգամանքին, որ 2021-ը հաջորդեց խիստ ճգնաժամային 2020 թվականին, այնուամենայնիվ, բավականին կարճ ժամանակահատվածում նկատվեց տնտեսական ակտիվություն, ինչն, անխոս, դրական ազդեցություն ունեցավ նաև բանկային համակարգի վրա:

Մենք շարունակել ենք թվային ծառայությունների կատարելագործումն ու մեր հաճախորդների պահանջներին համապատասխան էկոհամակարգի ընդլայնումը:

Idram&IDBank թվային հարթակը Հայաստանում միակն է, որ լիարժեքորեն մեկտեղում է բանկային և վճարահաշվարկային ծառայությունների մի ամբողջ համախումբ, ինչը թույլ է տալիս խնայել հաճախորդի ժամանակն ու տրամադրում հեռավար սպասարկման ամբողջական գործիքակազմ:

2021-ի ընթացքում մենք շարունակել ենք զարգացնել «Գնիր հիմա, վճարիր հետո» ձևաչափը Հայաստանում և տպավորիչ ցուցանիշներ ենք գրանցել: Մենք առանձնահատուկ առաջարկներով ենք հանդես եկել նաև բիզնես հաճախորդների համար՝ ստեղծելով IDBusiness հավելվածը, որով նրանք հնարավորություն ունեն կառավարել հաշիվները և հեշտությամբ կատարել անհրաժեշտ փոխանցումները:

2021-ի մեր նվաճումները թվարկելիս կարող ենք խոսել բանկային քարտերի թողարկման ծավալի մոտ 40%, թվային հարթակում գրանցված ակտիվ հաճախորդների մոտ 110%-ով աճի մասին, էապես աճել է նաև մեր կորպորատիվ հաճախորդների թվաքանակը: Բոլոր այս ցուցանիշները ևս մեկ անգամ ապացուցում են, որ մենք շարժվում ենք արդիական ուղղությամբ:

Հաճախորդամետ մոտեցումը պահելով մեր նախանշած նպատակների հիմքում՝ մենք շարունակելու ենք սահմանել հավակնոտ նպատակներ ու ստեղծել բոլոր անհրաժեշտ նախապայմանները դրանց հասնելու համար:

Շնորհակալություն վստահության համար:

**Հարգանքով՝**

**Խորհրդի նախագահ**

**Վարտան Դիլանյան**

# Վարչության նախագահի ուղերձը



**Միհր Աբրահամյան**

**Վարչության նախագահ**

Ծնվել է 1975թ. հոկտեմբերի 16-ին:

1997թ ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի Կառավարման և տնտեսական կապերի ֆակուլտետը:

2004թ. ավարտել է ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլետչերի Իրավունքի և Դիվանագիտության դպրոցը: Ունի CFA I, II մակարդակների որակավորում:

1999թ.-ից աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում, 2007–2012թթ.՝ որպես ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կարգավորման վարչության Բանկային համակարգի կարգավորման բաժնի ղեկավար, 2012 – 2018 թթ.՝ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետ:

2019թ. նշանակվել է IDBank-ի Վարչության նախագահ:

**Հարգելի գործընկերներ և հաճախորդներ,**

2021 թվականն ամփոփելիս, բարեբախտաբար, կարող ենք խոսել առաջընթացի և զարգացումների մասին:

Ճիշտ է, տարին մեկնարկեց ոչ այնքան բարենպաստ կանխատեսումներով, որոնք հիմնականում վերաբերում էին ճգնաժամի հաղթահարման բարդ փուլերին, սակայն ուրախությամբ պետք է նշեմ, որ անցումային այդ ժամանակահատվածը բավականին կարճ տևեց, և մենք թևակոխեցինք աճի ու զարգացման փուլ:

IDBank-ը, որպես թվային և նորարար Բանկ, 2021-ին շարունակեց իր թվային զարգացման ուղին: Մենք այս տարվա ընթացքում գրանցել ենք հաճախորդային բազայի զգալի աճ, Բանկն առաջատար դիրքերում է բանկային հավելվածի ֆունկցիոնալով ու վարկանիշով, ինչի արդյունքում դինամիկ կերպով ավելանում է նաև հաճախորդների ակտիվությունը թվային ուղիներում: Մասնավորապես՝ թվային ուղիներում գրանցված ակտիվ հաճախորդների քանակը 2021թ. ընթացքում աճել է 77%-ով՝ ապահովելով տարեկան պլանի գերակատարում:
2021-ի ընթացքում մենք շարունակել ենք զարգացնել «Ստացիր հիմա, վճարիր հետո» համաշխարհային վճարային ձևաչափի զարգացումը Հայաստանում՝ Rocket Line թվային ապառիկը, և գրանցել ենք էական հաջողություններ: Մեկ տարվա ընթացքում Rocket Line թվային ապառիկից հասցրել է օգտվել ավելի քան 30.000 հաճախորդ, իսկ ձևավորված պայմանագրերի քանակը գերազանցում է 500.000-ը, ինչը խոսում է պրոդուկտի հարմարավետության և պահանջված լինելու մասին:

2021 թվականին անհպում QR/NFC վճարումների ծավալը 2020 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ 4 անգամ աճել է: Բանկի հաշիվներով և քարտերով իրականացված QR/NFC վճարումների մասնաբաժինը նույնպես էական աճ է գրանցել:
Բանկն առաջատար դիրքում էր վարկային պորտֆելի աճի տեմպով, և, առհասարակ, IDBank-ը հայաստանյան բանկային համակարգում ամենադինամիկ զարգացող Բանկն է բոլոր ցուցանիշներով:

Հպարտությամբ կարող եմ շեշտել նաև Բանկի Կորպորատիվ սոցիալական աջակցության ծրագրերը: Միայն 2021-ի ընթացքում «Մի դրամի ուժը» նախաձեռնության շրջանակում Բանկը 40 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումար է փոխանցել բարեգործական տարբեր հիմնադրամների, որոնք կենսական նշանակության հարցեր են լուծում մեր երկրի համար: Ծրագիրը շարունակական է, և մեզ համար անչափ ուրախալի է, որ մարդիկ գնալով ավելի մեծ ներգրավվածություն են ունենում բարեգործությանը՝ վճարումները կատարելով Idram&IDBank հավելվածով և դառնալով բարի կամքի դեսպան: 2021-ին մենք նաև իրագործել ենք մի շարք այլ բարեգործական ծրագրեր՝ ԵՊՀ 4 ուսանողի տրամադրելով Արցախյան 44-օրյա պատերազմի հերոս Գևորգ Արշակյանի անվան կրթաթոշակ, աջակցելով քաղցկեղով հիվանդ երեխաներին, միջոցներ ուղղելով 1000+ հիմնադրամին և դեռ ավելին:

Վստահորեն կարող եմ նշել, որ շարունակելու ենք շարժվել թվային ռազմավարության ուղղությամբ՝ կիրառելով անհրաժեշտ ողջ գործիքակազմը մեր հաճախորդներին էլ ավելի հարմարավետ ու որակյալ սպասարկում առաջարկելու նպատակով:

**Հարգանքով՝**
**Վարչության նախագահ**
**Միհր Աբրահամյան**

# ՀՀ տնտեսությունը

## Տնտեսական ակտիվության ցուցանիշ




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

## ՀՆԱ ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

## ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ հիմնական բաղադրիչների ,ՀՀ դրամ




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

2020 թվականի խորը տնտեսական անկման համեմատությամբ 2021 թվականին տնտեսական աճը որոշակիորեն վերականգնվել է: 2021 թվականի արդյունքներով ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 5.7%:

Աշխարհաքաղաքական զարգացումներով և անորոշության բարձր մակարդակով պայմանավորված կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի դանդաղում:

# ՀՀ տնտեսություն

### Միջին տարեկան փոխարժեքներ




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

### Գնաճ (տարեկան կտրվածքով, ժամանակահատվածի վերջ,%)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

### Վերաֆինանսավորման դրույքաչափ (%)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

2021 թվականի արդյունքում գնաճը կազմել է 7.7%, ինչը գերազանցում է ԿԲ նպատակային ցուցանիշը (4%):
ԿԲ-ն գնաճի տեմպերը կարգավորելու նպատակով բարձրացրել է նաև վերաֆինանսավորման դրույքաչափը՝ տարեվերջին դարձնելով՝ 7.75%:

Կանխատեսվում է, որ 2022 թվականին գնաճի մակարդակի որոշակի նվազում կլինի, սակայն աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված գնաճը դեռևս կմնա բարձր մակարդակում:

# Ֆինանսական համակարգ

Բանկերի ակտիվների և վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին




Բանկային ավանդներ և վարկեր, մլրդ ՀՀ դրամ




1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի և ավանդների միջին տոկոսադրույք




2021 թվականի արդյունքներով Վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 53%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 10 տոկոսային կետով՝ պայմանավորված վարկերի 5% տարեկան կրճատմամբ:

2021 թվականի ընթացքում 1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի և ավանդների տոկոսադրույքները համեմատաբար կայուն են մնացել:

# Մեր ռազմավարական արդյունքները



Կարեն Նալբանդյան
Բիզնեսի զարգացման տնօրեն

Որպես նորարարության վրա հիմնված կառույց՝ մենք առաջարկում ենք ծառայությունների լայն շրջանակով թվային հարթակ: Հաճախորդները կարող են օգտվել հեռահար նույնականացման հնարավորությունից, դիմել նոր վարկային, քարտային պրոդուկտների համար, փոխանցումներ ստանալ, կառավարել իրենց ֆինանսները առանց բանկ այցելելու՝ ցանկացած վայրում, ցանկացած պահի:
Մեր հիմնական նպատակն է հաճախորդներին տրամադրել արագ, հարմարավետ և ապահով ծառայություններ: Այդ նպատակով մենք մշտապես ընդլայնում ենք մեր ծառայությունների շրջանակը՝ ստեղծելով հաճախորդակենտրոն էկոհամակարգ:

2021 թվականի ընթացքում ևս մշտապես զարգացրել ենք թվային հնարավորությունները, ընդլայնել գործընկերների ցանկը: Մասնավորապես, այսօր արդեն մոտ 7,500 վաճառակետում հաճախորդները կարող են վճարումներ կատարել Rocket line – ի միջոցով, որոնցից ավելի քան 2,300-ում առանց որևէ տոկոսագումարի: Տարեվերջի դրությամբ գրանցել ենք Rocket line-ի միջոցով իրականացրած գնումների մոտ 8 անգամ աճ:

2021 թվականի ընթացքում, շարունակելով բանկային թվային մշակույթի ակտիվ զարգացումը՝ մեր հաճախորդների համար ստեղծել ենք նաև առցանց, անհպում և անվտանգ վճարումների համար ևս մեկ տարբերակ – Visa Digital վիրտուալ քարտերը:
Թվային մշակույթի հերթական դրսևորումներից մեկը հանդիսանում է IDPay հավելվածի միջոցով փոխանցումները դեպի Ռուսաստան և հակառակը: Այս թվային լուծումը հնարավորություն է տալիս հաճախորդներին արագ, մրցակցային միջնորդավճարներով և, որ ամենակարևորն է, առցանց կատարել միջերկրային փոխանցումները:

Թվային ուղիներում գրանցված ակտիվ հաճախորդների մասնաբաժինը




Հավատարիմ մնալով մեր ռազմավարությանը, մշտապես զարգացնում ենք թվային ուղիները՝ հաճախորդներին առաջարկելով ֆինանսները կառավարելու ճկուն և հարմարավետ գործիքների փաթեթ: Արդյունքում, 2021 թվականի դրությամբ մեր ակտիվ հաճախորդների 70%-ը գրանցված է Բանկի թվային հարթակներում, իսկ նրանց ավելի քան 60%-ը ակտիվ է թվային ուղիներում ամսական կտրվածքով:

MAU – Digital Monthly Active Users




Մենք մշտապես հետևում ենք ֆինանսական ոլորտում տեղի ունեցող զարգացումներին և միտումներին, փորձում ենք զուգահեռ քայլել ժամանակակից միտումներին՝ ընդլայնելով մեր նորարարական գործունեությունը, մեր հաճախորդների համար փորձում ենք դառնալ առաջին ընտրության նորարար բանկ:

# Թվային հարթակ - Wallet and Banking

Idram և IDBanking համակարգը մեկ միասնական գործիք է բոլոր տեսակի վճարային գործարքներից, փոխանցումներից և այլ ֆինանսական ծառայություններից օգտվելու համար, այն ամբողջովին բացառում է բանկ հաճախելու, կանխիկի հետ շփվելու և անձնական ֆինանսների կառավարման գործընթացում ֆիզիկապես ներգրավված լինելու անհրաժեշտությունը:



Հեռահար նույնականացում



QR և NFC տեխնոլոգիաներով արագ և հեշտ վճարումներ



IDBanking




IDBank-ի բանկային քարտերը համակարգով պատվիրելու հնարավորություն




Rocket Line - Գնի՛ր հիմա, վճարի՛ր հետո




Արագ փոխանցումներ Idpay համակարգի միջոցով




Visa Digital վիրտուալ քարտեր

**2021 թվականի հիմնական ձեռքբերումները**

- ✓ Վիրտուալ քարտերի թողարկում
- ✓ Էլեկտրոնային թեյավճարների ներդրում
- ✓ IDPay համակարգով երկկողմանի փոխանցումներ
- ✓ Թվային հարթակներում գրանցված ակտիվ հաճախորդների **77%** տարեկան աճ
- ✓ Թվային հարթակներում գործարքներ իրականացնող հաճախորդների մոտ **110%** տարեկան աճ
- ✓ Rocket line գործարքների **8 անգամ աճ**
- ✓ Թվային ուղիներով ձևակերպված ավանդների մոտ **4 անգամ աճ**

# Մեր հաճախորդները

Բանկի կողմից մատուցվող ծառայություններից հնարավորինս հարմարավետ օգտվելու նպատակով Բանկն այժմ առաջարկում է հետևյալ հիմնական ուղիները.


Բազմաֆունկցիոնալ ինտերնետ և մոբայլ բանկինգ



Նորարարական և հարմարավետ մասնաճյուղեր


Privilege banking


24/7 ինքնասպասարկման գոտիներ


24/7 հեռախոսազանգերի կենտրոն

## Կորպորատիվ հաճախորդներ



**~ 10.5 հազ հաճախորդ**

+36% տարեկան

2021 թվականի վերջի դրությամբ Բանկի կորպորատիվ հաճախորդների թիվը շուրջ 10,500 է: Բանկը շարունակաբար զարգացնում է գործընկերային հարաբերությունները տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ՝ առաջարկելով հարմարավետ պայմաններ ֆինանսական խնդիրների լուծման համար: Արդյունքում գրանցել ենք հետևյալ ձեռքբերումները.

- ✓ Կորպորատիվ հաճախորդների համար նոր թվային հարթակ
- ✓ Եվրոպական Ներդրումային Բանկի հետ համագործակցության արդյունքում շահավետ պայմաններով բիզնես վարկերի առաջարկ մեր գործընկերներին
- ✓ Կորպորատիվ ընդհանուր հաճախորդների 36%, իսկ ակտիվ հաճախորդների դեպքում՝ 48% տարեկան աճ
- ✓ Կորպորատիվ քարտերի 47% տարեկան աճ
- ✓ Կորպորատիվ վարկային պորտֆելի 11% աճ
- ✓ POS տերմինալների մոտ 2 անգամ աճ

## Մանրածախ հաճախորդներ



**~ 395 հազ հաճախորդ**

+32% տարեկան

2021 թվականի վերջի դրությամբ Բանկի մանրածախ հաճախորդների թիվը շուրջ 395,000 է: Բանկը մշտապես զարգացնում է իր գործող ծառայությունները, մշակում և ներդնում է նորը՝ հաճախորդներին առաջարկելով լավագույն լուծումները: Արդյունքում գրանցել ենք հետևյալ ձեռքբերումները.

- ✓ IDsalary աշխատավարձային շահավետ փաթեթներ
- ✓ Մանրածախ ընդհանուր հաճախորդների 32%, իսկ ակտիվ հաճախորդների դեպքում 41% տարեկան աճ
- ✓ Մանրածախ քարտերի 30% տարեկան աճ
- ✓ Քարտով վճարումների մոտ 100% տարեկան աճ
- ✓ Մանրածախ վարկային պորտֆելի 26% տարեկան աճ
- ✓ Մրցակցային, ճկուն և շահավետ պայմաններ հիփոթեքային վարկառուներին, արդյունքում՝ հիփոթեքային պորտֆելի 62% տարեկան աճ

# Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

## «Մի դրամի ուժը» ծրագրի ամփոփում

«Մի դրամի ուժը» նախաձեռնությունը IDBank-ի ու Իդրամի համատեղ ջանքերով մեկնարկել է 2020 թվականի հունիսին և մինչ օրս իրականացրել է 9 ծրագիր՝ տարբեր կազմակերպությունների ուղղելով ավելի քան 54 մլն ՀՀ դրամ:



Ծրագրի՝ 2021 թվականի առաջին ամփոփման արդյունքում 6.962.504 ՀՀ դրամ փոխանցվել է Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնին: Գումարը հավաքվել է շնորհիվ ընկերությունների հաճախորդների, որոնք վճարումներ են կատարել Իդրամով, IDBanking.am առցանց հարթակով և երկու ընկերությունների տերմինալներով, իսկ ընկերությունները յուրաքանչյուր վճարման դիմաց Վերականգնողական կենտրոնին են փոխանցել 1 դրամ:

- Հունիս-հուլիս ամիսների ընթացքում կուտակված «Մի դրամների» ողջ գումարը՝ 6.925.000 ՀՀ դրամ, փոխանցվել է «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամին:
- Օգոստոս ամսվա ամփոփման արդյունքում 3,701,910 ՀՀ դրամ փոխանցվել է «Վահե Մելիքսեթյան» հիմնադրամին:
- Սեպտեմբեր – հոկտեմբերի ամիսների ընթացքում կուտակված «Մի դրամների» ողջ գումարը՝ 8.057.944 ՀՀ դրամ, փոխանցվել է Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամին, որը կազմակերպում է կյանքին վտանգ սպառնացող հիվանդություններ ունեցող երեխաների բուժումն արտերկրում:




- 2021թ.-ի վերջին փուլի ամփոփման արդյունքում IDBank-ն ու Իդրամը «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամին են փոխանցել 9.328.753 ՀՀ դրամ՝ այդպիսով դառնալով Nation Builder: Ծրագրի շրջանակում հեռավոր համայնքների աշակերտները հնարավորություն կունենան ստանալ պատշաճ կրթություն, բացահայտել իրենց համայնքի հնարավորություններն ու ներուժը:

## IDBank-ի ֆինանսավորմամբ հունիսմեկյան միջոցառումներ են անցկացվել



IDBank-ը հունիսի 1-ին տոն է պարգևել Արցախի սահմանամերձ գյուղերի երեխաներին: Կարմիր գյուղ, Սարուշեն, Կարմիր Շուկա, Խերխան, Քարահունջ գյուղերից 220 երեխայի համար կազմակերպվել է այց Ստեփանակերտ, որտեղ փոքրիկները Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում մանկական ներկայացում են դիտել: Այնուհետև երեխաները անակնկալ նվերներ են ստացել:

## IDBank-ը բարեգործական համերգի աջակից

«Ժպիտների քաղաք»՝ "City of Smile" հիմնադրամը կազմակերպել էր բարեգործական համերգ, որի հովանավորներից էր IDBank-ը: Համերգային համատեղ ծրագրով հանդես են եկել «The Beautiful Project», «Nemra» և «Լավ Էլի» հայկական ռոք-խմբերը: Համերգի նպատակը մեկն էր՝ միասնական ուժերով օգնել քաղցկեղի դեմ պայքարող երեխաներին:




**IDBank-ը՝ «Հայկական ռոքը հանուն քաղցկեղ ունեցող երեխաների»** բարեգործական համերգի աջակից

## IDBank-ի ֆինանսավորմամբ Գյորգ Արշակյանի անվան կրթաթոշակի մրցույթ




Հոկտեմբերի 20-ին Երևանի Պետական Համալսարանի նիստերի հանդիսավոր դահլիճում ամփոփվեց IDBank-ի և ԵՊՀ-ի կողմից սահմանված կրթաթոշակի մրցույթը: Կրթաթոշակը սահմանվել էր ԵՊՀ լավագույն ուսանող, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ, Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված ավագ լեյտենանտ Գևորգ Արշակյանի անվամբ:

# Ֆինանսական արդյունքներ



Արման Ասատրյան

Ֆինանսական տնօրեն,
Վարչության անդամ

2021 թվականի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 197 մլրդ ՀՀ դրամ, որի մոտ 60%-ը (117 մլրդ ՀՀ դրամ) կազմում են հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները: 2021 թվականի ընթացքում Բանկի վարկային պորտֆելի աճը կազմել է 24%, մինչդեռ ՀՀ բանկային համակարգում 2021 թվականին արձանագրվել է ընդհանուր վարկային պորտֆելի նվազում, ինչը առաջին դեպքն էր առնվազն վերջին 5 տարիների ընթացքում: 2021 թվականի արդյունքներով վարկային պորտֆելի աճի տեմպի ցուցանիշով Բանկը առաջատար դիրք է գրավում ՀՀ բանկային համակարգում:




2021 թվականի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր պարտավորությունների մեծությունը կազմել է 151 մլրդ ՀՀ դրամ, որի գերակշիռ մասը (մոտ 70%) կազմել են հաճախորդների ընթացիկ հաշիվները, ավանդները և Բանկի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը:

Ամփոփելով Բանկի ֆինանսական արդյունքները 2021 թվականի ընթացքում՝ կարող ենք նշել, որ չնայած երկրի հետճգնաժամային իրավիճակին, Բանկին հաջողվել է գեներացնել շուրջ 1.5 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթ՝ գրանցելով 3.4% կապիտալի շահութաբերություն և 0.8% ակտիվների շահութաբերություն:







Հաշվի առնելով, որ Բանկի կապիտալի համարժեքության, իրացվելիության մակարդակները գտնվում են բավականին բարձր մակարդակում, Բանկի զուտ մասհանումների մակարդակը համեմատաբար ցածր է՝ Բանկը ունի լայն հնարավորություններ իր գործունեությունը ընդլայնելու և նոր նախագծեր իրականացնելու համար՝ առանց վտանգելու Բանկի ֆինանսական կայունությունը անգամ բարդ մակրոտնտեսական իրավիճակում:

# Ֆինանսական արդյունքներ

**Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)**




**Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)**




**Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)**




**Շահույթ տարվա համար (մլրդ ՀՀ դրամ)**




**Զուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)**



# Բանկի պորտֆելները

## Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (ամորտիզացված արժեքով հաշվառվող) , մլն ՀՀ դրամ







## Մանրածախ վարկային պորտֆելի կառուցվածքը




## Կորպորատիվ վարկային պորտֆելի կառուցվածքը




## Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ (մլրդ դրամ)



# Մեր անձնակազմը

Բանկի ամենակարևոր ձեռքբերումը մեր աշխատակիցներն են: Աշխատակիցներ, ովքեր միասին համախմբված են մեկ նպատակի շուրջ և թիմային աշխատանքի շնորհիվ հասնում են հաջողությունների՝ Բանկին դարձնելով աշխատաշուկայի լավագույն գործատուներից մեկը:

Բանկը որպես գործատու, չի խնայում որևէ միջոց աշխատանքային միջավայրը ապահով և գրավիչ դարձնելուն, աշխատակիցների համար ֆինանսական և ոչ ֆինանսական մոտիվացիոն համակարգերի ստեղծման և բարելավման համար:

2021թ. դեռևս շարունակում էր լինել բարդ՝ որպես հետ պատերազմական և համավարակի տարի: Մյուս կողմից, կարևորելով մեր աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավումն ու գոհունակության բարձրացումը, Բանկը նոր հնարավորություններ է ստեղծում մշտական մասնագիտական աճի և հմտությունների բարելավման համար:

Բանկի ներքին կորպորատիվ պորտալը լայն հնավորությունների դռներ է բացում աշխատակիցների համար՝ ծանոթացնելով աշխատակիցներին տեղի ունեցող բոլոր նորություններին և հաջողություններին, ինչպես նաև մեկ էլեկտրոնային հարթակի տակ է ամփոփում աշխատանքային և սոցիալական շփումների և կարևոր տեղեկատվության տարածումը:

Աշխատակիցների շարունակական աճի համար 2021 թվականին գործարկվեց Բանկի էլեկտրոնային գրադարանը, օնլայն դասընթացների շտեմարանը, ինչպես նաև մի շարք առկա և էլեկտրոնային կուրսերի կազմակերպումը բոլոր օղակի աշխատակիցների համար:

Այս տարի հնարավոր եղավ կազմակերպել նաև մի շարք փոքր ու մեծ թիմային միջոցառումներ, որոնք ավելի ջերմացրին և ամրապնդեցին մեր աշխատակիցների աշխատանքային կապերը և հնարավորություն տվեցին համատեղել աշխատանքն ու հանգիստը:

**Մարիանա Եղիյան**
**Մարդկային կապիտալի կառավարման գծով տնօրեն**

**537** Բանկի աշխատակիցների փաստացի թվաքանակը 2021 թվականի վերջի դրությամբ

Աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %




Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %




Աշխատակիցների կազմն ըստ սեռի, %




Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ սեռի, %



## Թիմային և կորպորատիվ մշակույթ

Մենք Թիմային ենք – Բանկի հիմնական արժեքներից մեկը ներքին մշակույթի ամուր սյունն է և պարտադիր պայմանը հաջողության համար:

Թիմային աշխատանքի կարևորման հիմքում ընկան ռազմավարական հանդիպումները, կիսամյակային և տարեկան թիմային միջոցառումները, առողջ ապրելակերպն ու սպորտը, ինչպես նաև աշխատակիցների կատարողականով պայմանավորված խրախուսումները:





Այս տարի ևս շարունակել ենք հնարավորություն ընձեռել առկա և հեռավար աշխատանքի ճկուն անցումների համար, մասնաճյուղային այցելությունները, խրախուսումներն ու անհրաժեշտ օգնությունը և աջակցումը բարձրակարգ սպասարկման համար: Միևնույն ժամանակ կատարելագործվեցին գործընթացներն ու տեխնիկական գործառույթները հեռավար ռեժիմը հնարավորինս անխափան և արդյունավետ դարձնելու համար:






Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության միջոցառումները միտված են կրթության ծրագրերին, սոցիալական անապահով խմբերի աջակցությանը, տարեկան Նվիրի՛ր երազանք կամ դարձիր Ձմեռ պապ ծրագրի իրականացմանը:

## Վարձատրություն և մոտիվացիա

Մեր աշխատակիցները մեր ամենամեծ ակտիվն են, և նրանց ջանքերի և ներդրման շնորհիվ մենք ավելի ուժեղ և դինամիկ ենք դառնում մեր նպատակներին հասնելու ճանապարհին:

Բանկը կարևորում է ֆինանսական շուկայի վարձատրությանը և արտոնություններին պատշաճ և ժամանակին հետևելն ու կիրառելը, ինչպես նաև աշխատակիցների խրախուսման համակարգերի մշտապես բարելավելը: Բանկը աշխատակիցներին խրախուսում է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական եղանակներով: Բանկի արտոնությունների փաթեթը մշտապես վերանայվում և թարմացվում է:

Աշխատավարձի տարեկան վերանայումները, ինչպես նաև պարգևավճարի ճկուն մոդելներն բարձր ղեկավարության ուշադրության կենտրոնում են և կատարելագործվում են յուրաքանչյուր տարի՝ որպես Բանկի աշխատակիցների նյութական խրախուսման մշակույթի տարր:
















## Աշխատակիցների ներգրավման քաղաքականություն

Բանկը շարունակում է իր ներգրավման քաղաքականությունը կառուցել՝ ուսանողների շրջանում նոր հնարավորություններ ստեղծելով և միևնույն ժամանակ թիրախավորելով ոլորտի առաջատար մասնագետներին մի շարք հաստիքների համալրելու գործընթացում:

2021 թվականի ընթացքում թիմն ավելացել է շուրջ 127 նոր աշխատակցով՝ հիմնական շեշտադրումը դնելով տեղեկատվական տեխնոլոգիաների թիմի մեծացմանը, մասնաճյուղերի քանակապես հագեցմանը:

Շարունակելով կարևորել ներքին ռեսուրսի առաջընթացը՝ այս տարի հաստիքների շուրջ 25%-ը համալրվել է մեր ներքին ռեսուրսի առաջխաղացման շնորհիվ, ինչպես շարքային, այնպես էլ ղեկավար օղակներում:



## Կորպորատիվ մշակույթ եւ ներքին հաղորդակցում

Հետամուտ լինելով իր որդեգրած արժեքներին ու սկզբունքներին՝ Բանկը շարունակում է զարգացնել կորպորատիվ մշակույթն ու ներքին հաղորդակցման ուղիները: Բանկի աշխատակիցների համար ստեղծվել ու մշտապես զարգացվում է կորպորատիվ հաղորդակցման հարթակը, որի շնորհիվ Բանկի բոլոր աշխատակիցները ժամանակին ու պատշաճ տեղեկացվում են նորությունների ու տեղի ունեցող փոփոխությունների մասին, մասնակցում են հարցումներին ու հանդես գալիս առաջարկություններով, ոչ ֆորմալ կերպով շփվում են նույն նախասիրություններ ունեցող թիմակիցների հետ:



## Համագործակցություն ուսանողների հետ. Idream ծրագիր

Կրթության կարևորումը Բանկի կարևորագույն առաջնահերթություններից է: Բանկն ակտիվորեն համագործակցում է մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ

2021 թ-ին շուրջ Բանկը նորովի շարունակեց ուսանողների պրակտիկայի ծրագիրը՝ անվանելով այն IDream ուսանողական ծրագիր: Այս ծրագրի շնորհիվ ուսանողները ստանում են ֆինանսական ոլորտի տեսական գիտելիքներ և ձևավորում են հմտություններ, որոնք անհրաժեշտ են Բանկային ոլորտի սկսնակ աշխատակցին:

Ծրագրի մասնակից ուսանողների 80%-ը համալրում են Բանկում առկա թափուր հաստիքները:

Բանկը 2021թ. երկու անգամ իրականացրել է «IDream» ծրագիրը, հնարավորություններ տալով 24 նորավարտ ուսանողի սկսել իրենց կարիերան Բանկի հետ, այս կերպ արդեն ընդլայնելով մեր ուսանողների թիվը շուրջ 3 տասնյակի:





## Աշխատակիցների ուսուցում եւ զարգացում

Կարևորելով աշխատակիցների զարգացումն ու վերապատրաստումը՝ Բանկն ունի Ուսուցման և զարգացման կենտրոն և էլեկտրոնային ուսուցման հարթակ: Աշխատակիցները հնարավորություն ունեն վերապատրաստվել ոչ միայն արտաքին դասընթացների կամ Բանկում կազմակերպվող դասընթացների մասնակցելով, այլ նաև առցանց հարթակի միջոցով մասնակցել օնլայն դասընթացների իրենց հարմար ժամանակացույցով ու արագությամբ:

Հատուկ նշանակություն են տրվում  նաև միջազգային մասնագիտական կոնֆերանսների մասնակցությանը, բացի դա Բանկը մշտապես խրախուսում ու աջակցում է աշխատակիցներին ստանալու միջազգային որակավորումներ ու հավաստագրեր:

2021 թվականի ընթացքում աշխատակիցների 65%-ը մասնակցել է ներքին վերապատրաստման դասընթացների, իսկ 40%-ը վերապատրաստվել է՝ մասնակցելով արտաքին դասընթացների:

Հատուկ կարևորություն է տրվում մեր մասնաճյուղերի աշխատակիցների մասնագիտական որակների մշտապես բարձրացմանը, որի արդյունքում էլ ավելի բարձր մակարդակի է հասնում սպասարկման որակն ու հնարավորություն ենք տալիս աշխատակիցներին արագ բարձրանալ կարիերայի աստիճաններով:

Մենք գնահատում ենք մեր ղեկավար կազմի մշտական զարգացումը՝ դրանով խթանելով մեր մշտական աշխատողների հետագա զարգացումը, ինչպես նաև խրախուսում ենք մեր ղեկավար կազմին՝ մասնակցելու ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս անցկացվող միջազգային դասընթացներին:









# 3 Կորպորատիվ կառավարում

Մեր բաժնետերերը և խորհուրդը 27
Ռիսկերի կառավարում 29

# Բանկի բաժնետերերը

2022
“FISTOCO” LTD 100% բաժնետեր

2016
“FISTOCO” LTD 59.7% բաժնետեր

2013
CreditBank S.A.L. 100% բաժնետեր

2009
CreditBank S.A.L. 51% բաժնետեր

# Բանկի խորհուրդը



**Վարդան Դիլանյան**
Խորհրդի նախագահ
2011-ին միացել է Accenture- ին `որպես Ռուսաստանի Դաշնության ֆինանսական ծառայություններ խմբի գործադիր տնօրեն: Ներկայումս հանդիսանում է «Accenture»-ի ներկայացուցչության ղեկավարը Ռուսաստանում և Ղազախստանում:



**Կարեն Մարգարյան**
2003-ին միացել է Համաշխարհային էկոնոմիկայի R&D ինստիտուտին (Մոսկվա): Ներկայումս Համաշխարհային Էկոնոմիկայի R&D ինստիտուտի տնօրենն է և աշխատում է Մոսկվայի ֆինանսաիրավական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնում `որպես պրոֆեսոր:



**Ալեքսանդր Խաչատուրյան**
2018 թվականից աշխատում է Թի Քեյ ընդ Փարթներս/ TK and Partners/ ՓԲԸ-ում `որպես գործընկեր: Ներկայումս հանդիսանում է «Հայաստանի տնօրենների ինստիտուտի» հիմնադիր անդամ, «Հայաստանի էներգետիկ գործակալության» խորհրդի անդամ:



**Ելենա Խաչվանքյան**
2017-ից ներգրավված է միջազգային կազմակերպությունների հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրերում որպես փորձագետ, ինչպես նաև հանդիսանում է բիզնես-խորհրդատու ֆինանսների և կառավարման ոլորտներում:



**Ալեքսեյ Կոմար**
2006-2017թթ. աշխատել է «Ernst and Young» / Էրնսթ ընդ Յանգ (ԱՄՆ) B.V.» Մոսկվայի մասնաճյուղում որպես Ավագ խորհրդատու / Մենեջեր / Ավագ Մենեջեր / Տնօրեն:2017 թվականից առ այսօր աշխատում է որպես բիզնես խորհրդատու մի շարք ֆինտեխ ծրագրերում:

# Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդը իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում՝ համաձայն օրենքի և Բանկի կանոնադրության:

Խորհրդի լիազորություններից են՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ ռազմավարական զարգացման ծրագրի հաստատումը,
2. Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը,
3. Բանկում ներքին հսկողության ստանդարտների հաստատումը,
4. շահաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը,
5. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,
6. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացումը,
7. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,
8. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը,
9. Օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ հարցերի վերաբերյալ որոշումների կայացումը:

Բանկի խորհուրդ

⬇

Խորհրդին կից ռիսկերի, ներքին աուդիտի և ներքին հսկողության կոմիտե

⬇

Հիմնական նպատակը

Կոմիտեի հիմնական նպատակներն են՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի ներքին աուդիտի և ներքին հսկողության աշխատանքների արդյունավետության բարձրացումը, տվյալ համակարգերի գործունեության հարցում Բանկի Խորհրդի կառավարչական և հսկողական գործառույթների իրականացման ապահովումը

Կոմիտեի հիմնական խնդիրներն են՝

1) Բանկի Խորհրդի կողմից Բանկի գործադիր մարմինների գործունեության մշտական հսկողության ապահովումը և Կոմիտեի իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ Բանկի Խորհրդի անդամների արդյունավետ փոխգործակցության ապահովումը Բանկի ղեկավարության հետ.

2) Ռիսկերի կառավարման համակարգերի, ներքին աուդիտի և ներքին հսկողության աշխատանքների արդյունավետության և համարժեքության գնահատումը, Բանկի ներքին վերահսկողության ռիսկերի վրա հիմնված համակարգի ձևավորմանը մասնակցությունը

3) Կոմիտեի իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը և տրամադրումը Բանկի Խորհրդին և Բանկի ղեկավարությանը:

# Հիմնական տնտեսական նորմատիվներ

Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից բարձր մակարդակում:

2021 թվականի դեկտեմբերին Բանկի կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 23.3% (պահանջվող նվազագույն մեծությունը 12% է), իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 25.5% և 86.5% (պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար 15% և 60% են):

## Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1(2)




## Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)




## Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)



# Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

## Վարկային ռիսկի կառավարում

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները`

- ✓ վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- ✓ գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցակցության աստիճանը և մրցակցությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է նաև վարկային ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ:

Բանկը գտնվում է վարկային ռիսկերի կառավարման շարունակական զարգացման և արդիական մեթոդների ներդրման գործընթացում, մասնավորապես` Բանկում ներդրվում են վարկային ռիսկի կառավարման նոր արդիական մոտեցումներ և հաշվողական մոդելներ, մանրածախ վարկավորման գործընթացի սքորինգային համակարգեր, հաճախորդների ռիսկայնության մակարդակների վրա հիմնված վարկերի գնագոյացման համակարգ (Advanced Risk-Based Pricing (RBP) model):

## Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հաշվարկվում է իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվները, որոնց հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ: Բանկը իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է հետևյալ հիմնական մոդելների միջոցով`

- ✓ Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդել,
- ✓ Իրացվելիության նորմատիվների վերլուծություն,
- ✓ Սթրես-թեստավորում:

## Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, միշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ճեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով, նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

## Արտարժութային ռիսկի կառավարում

Արտարժութային ռիսկի կառավարման հիմնական սկզբունքն է նպաստել Բանկի արտարժութային բաց դիրքերի արդյունավետ կառավարման գործընթացին` միաժամանակ հետևելով սահմանված արտարժութային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղենիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

## Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկերի հայտնաբերման և դասակարգման համար Բանկն իրականացնում է ռիսկերի ինքնագնահատում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում և խաբեության ռիսկի հայտնաբերում («Կատարված, փոփոխված և հեռացված գործարքների», FPD/SPD/TPD տվյալների մասին հաշվետվությունների և Բանկում իրականացված գործաքների մշտադիտարկման միջոցով):

Մինչ նոր պրոդուկտների, նոր և վերանայվող ներքին իրավական ակտերի, բանկային գործառնությունների, գործողությունների և համակարգերի ներդրումը, Բանկը ԳՌ տեսանկյունից պոտենցիալ ռիսկերի բացահայտման նպատակով, ապահովում է վերջիններիս ուսումնասիրությունը և սահմանում է գործընթացների քայլային հաջորդականությունների ռիսկի հակվածության աստիճանները:

## Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը` հիմք ընդունելով միջազգային ռեյտինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

# Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

## Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

## Ռազմավարական ռիսկի կառավարում

Ռազմավարական ռիսկի կառավարման հիմնական նպատակն է անհամապատասխան Բիզնես մոդելի որդեգրման արդյունքում առաջացող կամ հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելը: Ռազմավարական ռիսկի առաջացման հնարավորությունը բացահայտելու և գնահատելու նպատակով Բանկը ներդնում է չափանիշներ, որոնց կարգավիճակի և մեծության փոփոխությունը նշանակում է Բանկի գործունեության որոշակի ուղղության բնույթի փոփոխություն, և հետևաբար, որակապես այլ բնույթի ռազմավարական ռիսկ կրելու հնարավորություն:

**Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:**

**31/12/2021թ դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:**

# 4 Ֆինանսական հաշվետվություններ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 33
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 33
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 34
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 34

## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | Ծնթգ. | 2021թ. հազ. դրամ | 2020թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ | 4 | 16,029,030 | 13,491,380 |
| Տոկոսային ծախս | 4 | (6,458,414) | (5,098,556) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **9,570,616** | **8,392,824** |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ | 5 | 3,270,797 | 1,577,052 |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս | 5 | (3,641,172) | (1,681,729) |
| **Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ ծախս** | | **(370,375)** | **(104,677)** |
| Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից | 6 | 586,709 | 935,793 |
| Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ ֆինանսական գործիքների գծով | | 881,317 | (344,236) |
| Զուտ իրացված օգուտ ներդրումային արժեթղթերի գծով | | 21,480 | 1,299,081 |
| Զուտ այլ գործառնական եկամուտ | 7 | 86,672 | 238,912 |
| **Գործառնական եկամուտ** | | **10,776,419** | **10,417,697** |
| Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ | 8 | (1,056,890) | (2,176,258) |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (4,473,086) | (3,627,125) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 9 | (3,203,554) | (2,917,238) |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկումը** | | **2,042,889** | **1,697,076** |
| Շահութահարկի գծով ծախս | 10 | (500,866) | (525,614) |
| **Շահույթ տարվա համար** | | **1,542,023** | **1,171,462** |
| **Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի** | | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | | |
| Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ. | | | |
| – իրական արժեքի զուտ փոփոխություն | 10 | (112,454) | 607,361 |
| – շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար | 10 | (17,614) | (1,065,246) |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | *(130,068)* | *(457,885)* |
| **Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ տարվա համար՝ առանց շահութահարկի** | | **(130,068)** | **(457,885)** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | **1,411,955** | **713,577** |

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ծնթգ. | 2021թ. հազ. դրամ | 2020թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 11 | 19,706,584 | 17,217,615 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | 403,975 | - |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 12 | | |
| – Բանկի կողմից պահվող | | 8,427,360 | 6,040,756 |
| – Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված | | - | 2,443,334 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 12 | | |
| – Բանկի կողմից պահվող | | 8,157,426 | 6,606,680 |
| – Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված | | 10,589,557 | 14,059,182 |
| Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ | 13 | 12,446,803 | 17,819,238 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 14 | 6,076,072 | 6,039,207 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 15 | 117,101,711 | 94,522,560 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 16 | 7,254,785 | 6,722,661 |
| Օգտագործման իրավունքի ձևի ակտիվներ | 17 | 1,369,777 | 1,493,835 |
| Առգրավված ակտիվներ | 15 | 3,130,926 | 2,484,925 |
| Այլ ակտիվներ | 18 | 1,869,406 | 1,480,526 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **196,534,382** | **176,930,519** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | | 8,469 | 19,040 |
| Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ | 19 | 27,172,892 | 26,812,253 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 20 | 13,008,429 | 20,785,812 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 21 | 13,337,577 | 13,416,535 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 22 | 92,163,976 | 66,773,517 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 10 | 824,479 | 1,011,619 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 17 | 1,507,701 | 1,542,646 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 173,644 | 661,306 |
| Այլ պարտավորություններ | 23 | 2,656,049 | 1,638,580 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **150,853,216** | **132,661,308** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 24 | 33,971,850 | 33,971,850 |
| Էմիսիոն եկամուտ | | 5,014,099 | 5,014,099 |
| Շենքերի վերագնահատումից աճ | | 105,601 | 105,601 |
| Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ | | 255,028 | 385,096 |
| Չբաշխված շահույթ | | 6,334,588 | 4,792,565 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **45,681,166** | **44,269,211** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **196,534,382** | **176,930,519** |

## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ծնթգ. | 2021թ. հազ. դրամ | 2020թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Ստացված տոկոսներ | | 15,838,658 | 13,423,198 |
| Վճարված տոկոսներ | | (6,203,925) | (5,483,882) |
| Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ | | 3,270,797 | 1,577,052 |
| Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ | | (3,641,172) | (1,681,729) |
| Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով | | 878,135 | (320,641) |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | | 1,409,061 | 368,566 |
| Այլ ստացված եկամուտ | | 86,672 | 411,491 |
| Անձնակազմի գծով ծախսերի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ | | (6,019,813) | (5,613,721) |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | (494,383) | - |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | | (37,985) | (1,269,114) |
| Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ | | 4,409,927 | (6,197,277) |
| Հաճախորդներին տրված վարկեր | | (28,032,134) | (16,056,000) |
| Այլ ակտիվներ | | (281,753) | 779,927 |
| **Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)** | | | |
| Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ | | 1,045,345 | 6,180,007 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | | (7,562,708) | 3,685,688 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | 28,764,233 | 4,955,856 |
| Այլ պարտավորություններ | | 511,312 | 149,034 |
| **Գործառնական գործունեությունից ստացված/ գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը** | | **3,940,267** | **(5,091,545)** |
| Վճարված շահութահարկ | | (1,147,116) | (18,000) |
| **Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր** | | **2,793,151** | **(5,109,545)** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում | | (1,020,177) | (2,508,324) |
| Մուտքեր ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից | | 2,283,194 | 6,141,496 |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (1,461,818) | (1,710,632) |
| **Ներդրումային գործունեության համար (օգտագործված)/ ներդրումային գործունեությունից ստացված դրամական հոսքեր** | | **(198,801)** | **1,922,540** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից | 21 | 6,038,359 | 5,708,144 |
| Թողարկված պարտքային արժեթղթերի մարում | 21 | (5,042,750) | - |
| Վարձակալության գծով պարտավորությունների մարում | 17 | (265,235) | (290,591) |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր** | | **730,374** | **5,417,553** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | | **3,324,724** | **2,230,548** |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (838,733) | 654,234 |
| Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 2,978 | (4,204) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | | 17,217,615 | 14,337,037 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | 11 | **19,706,584** | **17,217,615** |

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

| հազ. դրամ | Բաժնետիրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Շենքերի վերագնահատումից աճ | Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 33,971,850 | 5,014,099 | 110,808 | 842,981 | 3,615,896 | 43,555,634 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | - | - | 1,171,462 | 1,171,462 |
| **Այլ համապարփակ վնաս** | | | | | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | | | | | |
| – Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | - | 607,361 | - | 607,361 |
| – Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | - | (1,065,246) | - | (1,065,246) |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | - | - | - | *(457,885)* | - | *(457,885)* |
| *Հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս* | | | | | | |
| Վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք | - | - | (5,207) | - | 5,207 | - |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս* | - | - | *(5,207)* | - | 5,207 | - |
| **Ընդամենը այլ համապարփակ վնաս** | - | - | **(5,207)** | **(457,885)** | **5,207** | **(457,885)** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | - | - | **(5,207)** | **(457,885)** | **1,176,669** | **713,577** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **33,971,850** | **5,014,099** | **105,601** | **385,096** | **4,792,565** | **44,269,211** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 33,971,850 | 5,014,099 | 105,601 | 385,096 | 4,792,565 | 44,269,211 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | - | - | 1,542,023 | 1,542,023 |
| **Այլ համապարփակ վնաս** | | | | | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | | | | | |
| – Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | - | (112,454) | - | (112,454) |
| – Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | - | (17,614) | - | (17,614) |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | - | - | - | *(130,068)* | - | *(130,068)* |
| **Ընդամենը այլ համապարփակ վնաս** | - | - | - | **(130,068)** | - | **(130,068)** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | - | - | - | **(130,068)** | **1,542,023** | **1,411,955** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **33,971,850** | **5,014,099** | **105,601** | **255,028** | **6,334,588** | **45,681,166** |

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. Ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են ԱյԴի Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

2. 2021 թվականի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) |
| --- | --- |
| **Մհեր Աբրահամյան** | Վարչության նախագահ |
| **Արման Ասատրյան** | Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ |
| **Կարեն Նալբանդյան** | Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ |
| **Ռաֆիկ Սուվարյան** | Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ |
| **Անուշիկ Խաչատրյան** | Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ |
| **Սերգեյ Առաքելյան** | Թվային բանկինգի տնօրեն, Վարչության անդամ |
| **Տիգրան Մխիթարյան** | Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն Վարչության անդամ |